1. ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ. ՄԱՔԱՌՈՒՄ

ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԻՑ՝ ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

Բարի լույս, Արցախ...

Իսկ Արցախ աշխարհը, ղարաբաղցիները զբաղված են, հոգսերը շատ են՝ կուտակ-կուտակ, ու թվում է. թե դրանց վերջ չկա ու վախճան: Եվ բարի լույսի հետ ու առավոտի քաղաքի փողոցներով, հրապարակներով շտապում են ստեփանակերտցիները՝ տղամարդիկ, կանայք և շատ-շատ երեխաներ: Եվ ամեն ինչ առօրեական է, անվրդով, ինչպես բոլոր քաղաքների բացվող առավոտը, ու սակայն երեկ, դրա նախորդ օրը, ամբողջ 1988-ին չէին փոփոխվում նույն փողոցներն ու հրապարակները, ալեկոծված՝ այս մարդկանց հոգիները: Ամենուր նաև զինվորներ են ավտոմատավոր, պարետային ժամ է և ղեկավարման Հատուկ կոմիտե: Տանկն ու զինվորը սովորական են դարձել, և ստեփանակերտցին ու կանաչ համազգեստով այս տղաները միմյանց ողջունում են բարեկամի պես, ամենօրյա սովորական բարևով:

Արցախցին համոզված է, որ ամեն ինչ լավ կլինի. հնչումին վերջ,— ասում են նրանք միաբերան: Դրա համար ամեն ինչ անում են անտրտունջ, հոգածությամբ:

Առավոտ ծեգին, բերես, քաղաքի միակ հյուրանոցի չորս հարկանի շենքում է ինչ-որ բժիշկ, ուղղակի տխուր: Այստեղից դուրս են գալիս միայն դասի գնացող թախծոտ աչքերով երեխաներ, գաղթական երեխաներ: «Տանը» մնում են նրանց ծնողները, պապերն ու տատերը, եղբայրներն ու քույրերը, հարյուրավոր հասուն մարդիկ՝ անգործ, անտուն:

Հատուկ կառավարման կոմիտեի նախագահ ընկ. Ա. Ի. Վոլսկուն հարցնում եմ.

— Ի՞նչ պիտի լինի այս մարդկանց վիճակը, երկա՞ր է շարունակվելու, ե՞րբ պետք է նրանք վերադառնան իրենց տները, հատկապես՝ շուշեցիները:

— Շատ դժվար խնդիր է, հավանաբար դեռ երկար կտևի. փոխադարձ ներողամտություն է պետք: Իսկ դուք մտածո՞ւմ եք ձեր հանրապետությունում տուն ու տեղը քանդվածների մասին:

Հազարներով եկել են, աշխատանքի տեղ չկա, բնակարաններ չունենք: Գյուղերում պայմաններ կան, աշխատող ձեռքի կարիք՝ նույնպես, չեն գնում, քաղաքից են՝ Բաքու, Շուշի, Սումգայիթ...

Ղարաբաղի նոր կառավարիչը՝ մարզին ու նրա պրոբլեմներին քաջատեղյակ, հուսադրում է, մտածում է վաղվա, գալիքի ծրագրերի մասին, ընդարձակ քարտեզի մոտ ծանոթացնում մի քանի տնտեսական ու ստրատեգիական նշանակություն ունեցող ձեռնարկումների՝ մասնավորապես Հայաստանին կապող նոր ավտոմայրուղու և երկաթգծի կառուցմանն առընչվող: Եվ խոստանում է հանգամանալի հարցազրույց՝ մեր թերթի համար, իհարկե՝ առաջիկայում:

Ինձ և առհասարակ, կարծում եմ, շատերին, այդուհանդերձ, անհանգստացնում է գաղթականների ճակատագիրը: Հազարավոր շուշեցիներ՝ թափառական դարձած, ահա արդեն քանի ամիս, անգործ ու բոկոտն մի կերպ պահում են իրենց գլուխները: Նույնը և բաքվեցիները, սումգայիթցիները, մինգեչաուրցիները: Ստեփանակերտում պատմեցին, որ Շուշիում մնացել է ընդամենը մի հայ պառավ կին, միայնակ ու անվեհեր... ասել է. «Թող փորձեն գալ ինձ վրա, էնպես կրակեմ...»:

Այսօ՞ր էլ մաքառում, այն էլ՝ պայքար գոյության, տարրական իրավունքների համար:

— Ինչո՞ւ եկար Քո քաղաքից,— հարցնում եմ Ստեփանակերտում, անծանոթ տանը ապաստանած բաքվեցի Վլադ Աղաջանյանին, պատվավոր մի երիտասարդի, որը, ըզգում եմ, շատ է ամաչում անծանոթ օջախում ապրելու համար:

— Մի անգամ չէր, երկու, ամեն օր կռիվ էր, վիրավորում էին, հետո սպառնացին: Իմ գործընկերները, որոնց հետ ամեն օր հաց էինք կիսել, օգնել եմ աշխատանքում, արհեստի մեջ: Նրանցից մեկը, Մուրքուզ անունով, մի օր բոլորի ներկայությամբ «փիլիսոփայեց»: Ասում է՝ գիտե՞ք, հայերը արհեստավոր ժողովուրդ են, անընդհատ սրա-նրա դուռը գործ են արել, դրա համար ոչ տուն ունեն, ոչ էլ հայրենիք: Տես,— կատաղած ինձ նայելով եզրակացրեց Մուրքուզը,— մեզանից հող են ուզում խլել, որ հայրենիք ունենան: Սրան փորձեց սատել նաև Միտրոֆանը, ասաց՝ ընդհակառակը, ով լավ արհեստավոր է, նա հիանալի տունտեղ է դնում, ծաղկուն հայրենիք է ունենում: Ոչ ոք չլսեց նրան: Ես չդիմացա, ասի՝ Մուրքուզ, հիշո՞ւմ ես, երբ շինարարություն եկար, արհեստ չգիտեիր, աշխատել չէիր կարողանում, նույնիսկ ասացիր հայրանուն չունես: Ամեն ինչ սովորեցրի, թեև քեզնից քաշել էի, սա՞ է քո շնորհակալությունը՝ ուզում ես վռնդել: Դրա փոխարեն, երախտամոռ, լավ կլինի գնաս, գտնես քո հայրանունը, որովհետև առանց հայրանվան մարդ չի լինում: Անցի ու ընտանիքս վերցրի, եկա:

Հանգստացնում եմ խելոք աչքերով այս տղային, համոզում, որ լավ կլինի, այստեղ քո հայրենիքն է, մեր բոլորի վերջին հանգրվանը, այստեղ քո դուստր Ռուզանը մաքուր հայերեն կսովորի և մյուս ծնվելիք զավակներդ՝ նույնպես: Ապա զայրանում եմ վրան. արհեստ սովորեցնում էիր քի՞չ էր, հայրանուն գտնելու հո՞գսն ինչու էիր վերցնում քեզ վրա: Շատ չէ՞ արդյոք մեր ուսերին այսքան բեռ ու կռիվ...

ՄԱՔԱՌՈՒՄ... հայոց բառարանի ամենից հնագույն, բայց և ամենից կենսունակ բառը, հայի համար ուրիշ մի իմաստով ու բովանդակությամբ: Երևի այս բառը մեր բառարանում ինքը կուզենար տեղը զիջել իր հականիշին այդքան չչարչրկվելու համար: Ախ, մաքառել՝ մեզ համար լոկ չի նշանակում կռվել, պայքարել: Դա միայն զարկել ու զարկվել չէ, այլ ավելի շատ՝ դիմանալ, տոկալ, գոյատևել, բարձրանալ: Այդ բառը մեզ ժառանգել է երևի թե Հայկ Նահապետը, օդի պես կախել իր Թորգոմա ցեղի ականջին և հավերժության ճամփա հանել: Մաքառել գոյության համար՝ Ավարայրով ու Սարդարապատով, հայրենիքի, նրա ազատության, հասկանալի է, բայց այդ ո՞ր ազգն ու ժողովուրդն է այսքան մաքառել իր ծաղկած մատյանը փրկելու համար: Մշո Ճառընտիրը վանականների հանգանակած դրամով նոր վերցրեցինք բարբարոսից՝ քիչ էր, 1915-ին էլ մամիկի շալակով այստեղ հասցրեցինք: Սրանից ավելի մեծ մաքառո՞ւմ: Բայց մաքառել՝ ապացուցելու համար, որ սա մեր հողն է, սա ինչ-որ խաչադաշ չէ, այլ խաչքար՝ բոլորին հայտնի հայերեն երկու հազարամյակի գոյության պարզ բարդությամբ, սա արդեն մաքառել չէ, ինչ-որ ուրիշ բան, ու թող բոլոր հին բառարաններից սկսած մինչև նորերը, սանսկրիտից մինչև բուշմեններեն հանեն բանականությունից ու երևակայությունից դուրս, անծանոթ բառ-հասկացությունը: Չկա:

Ուրա՞ն հաճախ է մաքառումը մեզ համար փոխարկվել տառապանքի, դարձել խաչ ու Գողգոթա:

Ստեփանակերտի փողոցներից մեկով անցնելիս մեր դիմաց է «ելնում» երկհարկանի, կամարաձև մի տուն: «Տեսեք,— պատմում է մեզ ուղեկցող ստեփանակերտցին,— սա Բագրատ Ուլուբաբյանի տունն է, որն այնպես էլ չվայելեց: Խեղճը ուղղակի փախավ այստեղից, որ չբռնեն: Իսկ գիտե՞ք ինչու,— մի տեսակ շիկացած շարունակում է նա, տեղ-տեղ անցնելով բարբառին,— որովհետև ասել ա Ղարաբաղը հայկական հող ա, մունք ալ հայ ենք»...

Խեղճ մեր վաթսունականներ, ոչ երանի ձեզ. «զարգացած սոցիալիզմի» շեմին ոտք դնող հավատավոր եղբայրներ: Օրհնությո՞ւն ձեր մաքառում-տառապանքին:

Օրհնություն քո երազին, զորությունը՝ բազկին ու մտքին, ստեփանակերտցի քանդակագործ Արմեն Հակոբյան, որ այդքան հավատավոր ես ու երախտագետ: Որդու պես, զավակի:

Հերոսների պուրակում կանգնած եմ նրա ստեղծած հուշարձանի մոտ. երկրաշարժի զոհերի հիշատակին: Քանդակված է ղարաբաղցի կին, ո՛չ, հա՛յ կին է, հայ մայր, հայ քույր, հայ տատ, հայ, հայ, հայ... ամեն ինչ: Վիշտը կքել է նրան, սուգումն անպարտելի ձևի մեջ է. իսկ ոտքերը... իրար վրա, կծկված, ոտքերն էլ են «խոսում»:

— Քանի՞ օրում ստեղծեցիր...

— Մի քանի, օր ու գիշեր, անքուն:

— Ո՞ւմ գաղափարն է:

— Քաղաքի գլխավոր ճարտարապետի, Քաղսովետի ղեկավարների: Է՞, մեր բոլորի, ողբը մերն է:

— Կողքին ի՞նչ է, հուշարձա՞ն է:

— Սումգայիթի զոհերի, անցյալ տարի եմ դրել: Այդպես է մեզ վիճակված՝ զոհերով, հիշատակներով: Ճակատագիր է: Ոչինչ, մեր աստղային ժամն էլ կգա:

ՃԱԿԱՏԱԳԻՐ: Ի՞նչ է այն, դարձյա՞լ առեղծված, չէ՛, ավելի անագորույն մի բան հայերիս համար: Հիշեցի հույն գրող Միցոս Ալեքսանդրոպուլոսին՝ «Ճակատագիրը հայերին դրել է դժվար մի տարածքի վրա...»: Այո՛, պատվելի Միցոս, դժվար է մեր տարածքը, ներողություն՝ հողը, մի՛ թիզ լինի, թե Ամերիկայի չափ, հայերս հող ենք ասում, տարածքը ինչ-որ խորթ բառ է. մեր մեջ նոր մտած: Մեր հողը շարունակ խժռել են, և նա փոքրանում է հանց շագրենի կաշին: Բայց որքան փոքրանում է, այնքան մեծ, թանկագին է դառնում, խնկարկելի: Գիտես, ով սեփական հողի վրա է տուն կառուցում՝ օրհնում է այդ տունը, դարձնում շենշող ու ամեն օր խնկարկում է՝ աշխատանքով, բարի գործերով: Մոմ վառողը երբեք ուրիշի հողին, ունեցվածքին աչք չի տնկում, դա քոչվորի, գողի վարք է: Եվ հետո ճակատագիրը միայն տարածքով չէ որոշվում, այն նաև քաղաքակրթություն է, որդան կարմիր ու Գեղարդ, այն ողբ ու անեծք է. անանձնական սեր:

Ամեն ինչ լավ կլինի, համոզված ասում է ղարաբաղցին, քանզի եկվորները հեշտորեն կարող են մոլորվել հայոց պատմության լաբիրինթոսում, ինչպես մեր լեռներում, մոռացե՞լ եք, որ Նոյը մեծ դժվարությամբ գտավ իր տապանը Արարատի գագաթին: Եվ հետո «Բարբարոսները շատ կգան ու կանցնեն անհետ, Արքայական խոսքը մեր կմնա հավետ»...

«Լավ պեն ա ղարաբաղցի իլլալը». հադրութցի 80-ամյա Պետրոս բիձու՝ հիմնի տողի պես հանդիսավոր հպարտությամբ ասված խոսքը հիշեցի, տարված լեռնաշխարհի գեղեցկությամբ, երբ մտանք Շոշ՝ Վարանդա գավառի հինավուրց, ծաղկուն շեներից մեկը (որին էլ, ինչպես շատ ու շատ արցախյան տեղանունների, օտարասեփականող վերջածանց են կպցրել՝ քենդ): Ճանապարհը, դուրս գալով լանջն ի վեր, ներքևում թողնելով Կարկառ գետը, բարձրանում է դեպի Շուշի: Տափարակի վրա, հենց ճամփեզրին, չափրված ծոծոլ մեկը, կրակի մոտ նստած խլշկոտած այս ու այն կողմ էր նայում: Ուրեմն հայ չէ, այլ տարաշխարհիկ մեկը,— մտածեցի,— չէ՞ որ կրակի հետ չի խաղում: Եվս մի պահ, մերձակա զառիթափից դուրս եկավ դարձյալ մեկը՝ տաբատը կոճկելով: Չէ, սրանք հաստատ իրենց ճամփեն չփոխել են: Բայց ինչո՞ւ են կրակ արել, հետ չե՞ն ուզում դառնալ իրենց եկած ճանապարհով: Թե չէ բոլոր «չփոխվածները» եթե գան ու մնան, այս աշխարհը կդառնա անկոչների իջևանատեղի: Եվ հետո գալ ու մնալով հո չէ, հապա հոգու հետքը, գրի տառերը, առանց դրա ապրել կլինի՞: Չէ, սա հայկառատություն չէ, ընչազուրկ լինելը ամոթ բան չէ, սա արդեն վատ սովորություն է, վտանգավոր ոչ միայն տանտիրոջ համար: Եթե պարզ, մարդկային լեզվով բացատրեմ, կհասկանա՞ն, ասեմ՝ վերադարձեք այնտեղ, որտեղից եկել եք, գնացեք, գտեք ձեր տունտեղը, ձեր հեմիշը: Բայց նրանք վեր կացան ու հեռացան, թեև դանդաղ, էլ ավելի առաջ եկան...

Իսկ բարձունքի վրա Շուշին էր, նրա հավերժության, նրա հայեցի խորհրդանիշ Ղազանչեցոց սուրբ Ամենափրկիչ եկեղեցին՝ մեր քարեղեն Երմակ հեշը, հիմա թալանված, մեն-միայնակ: Լո՞ւյս իջնի հոգուդ, Հովհաննես Շիրազ, ասում էր. «Ինչպես լռեմ, այսքան մոտ եմ Մասիսին, այսքան մոտ եմ, բայց կարոտ եմ Մասիսին»... Այսքան մոտ եմ Շուշիին, բայց չեմ կարող հանդիպել, դեռ առավոտյան մարզկենտրոնում խորհուրդ տվեցին հրաժարվել այդ ցանկությունից, «անվտանգությունը չենք երաշխավորում»,— ասացին: Ասված իմ՝ օրը ցերեկով, տանկերի, ավտոմատավոր զինվորների ուղեկցությամբ: Գոնե Քարագլխի բերդի որմերը կարո՞ղ եմ շոշափել. Վա՜յ, հայոց դավաճան մելիք Շահնազար Բ, որ վաչկատուն չանարգուն հանձնեցիր բերդը, այդ օրվանից մեր մաքուր, լուսաբարբառ առավոտին խառնեցիր փեյղամբարի մռոցը: Անիծվես դու երիցս, միշտ, մուսավաթական Սուլթանով, որ ականջի փոշի չարժեիր, բայց 1920-ին Արևմուտքից եկած քո արնախում ցեղակից կանոնավորներին խառնըված՝ 35 հազար անմեղ հայի արյուն խմեցիր:

Ուրեմն ողջախոհության պահը դեռ հեռո՞ւ է: Անպատժելիության և անօրինության պարանը շատ չձգվե՞ց, թե դա զուտ բարոյական խնդիր է և ուրիշ ոչինչ: Եվ ովքեր են մեղավոր դրա համար: «Բոլորս՝ լրագրողներս, գրողներս, պրոպագանդիստներս թույլ ենք տվել շատ դրամատիկական մեծ սխալ, իսկականից ամբողջ ժողովրդով չենք ողբացել Սումգայիթի զոհերի առիթով՝ անկախ նրանց հայկական ծագումից, հենց որպես անմեղ զոհված սովետական մարդկանց»,— գրում է «Սովետսկայա կուլտուրա» թերթի թղթակիցը 1988 թ. դեկտեմբերի 29-ի համարում:— Ապա շարունակում է. «Ամենավճռական ձևով, անվերապահորեն չհանձնեցինք հրահրողներին ու մարդասպաններին՝ դարձյալ անկախ նրանից, որ նրանք ադրբեջանցիներ էին, այլ որպես մարդկային ցեղի դահիճների»...

Հիրավի, ամոթ-անեծք ոչ միայն մարդասպաններին: Նաև... նաև ինտերնացիոնալիզմի, եղբայրության կեղծ գաղափարախոսներին: Մեր հանրապետության երեկվա առաջին ղեկավարներին, ովքեր ուղիղ մեկ տարի առաջ կատարված այդ քստմնելի ոճիրի օրերին փոխարեն պրոպագանդիստներիս, ամբողջ հասարակայնության միտքն ու բարոյականությունն ուղղեին նախճիրը դատապարտելու, այո, այո, դատապարտելու, այդ կերպ ինչ-որ բան ինչ-որ չափով մաքրագործելու մարդասիրական խնդրին, անբարո հրահանգներ էին տալիս վերևից: Համենայն դեպս մեզ՝ ժուռնալիստներիս, ստիպում էին «զարգացած սոցիալիզմի» ժամանակների պաթետիզմով ու սահմռկելի կեղծիքով հենց այդ օրերին գրել... եղբայրության մասին: Եվ որոշ աճպարարներ, որպեսզի հաց ու աշխատանք չկորցնեն, խղճալի եղբայրության փշրանքներ էին մուրում: Հասարակության առողջացման դեղամիջոց չէ դա, այլ, ճիշտ հակառակը, վերքն ու վիշտ խորացնող հակապրոպագանդիստական «մուրհակ»: Վերակառուցումը մեզ հակառակն է ուսուցանում. ուրեմն ճիշտ հասկանանք ու փայփայենք այն:

Շուշի չմտնենք, Ղազանչեցոց եկեղեցի՝ նույնպես, քանզի ոչ այնքան մեր անձի համար վտանգավոր է, որքան կրքեր բորբոքող: Հասկացանք: Բայց ճամփի վրա, ամայի տափարակին կարելի է մոտենալ, տեսնել այդ «առեղծվածային» Թոփխանան (հիմա՝ Խաչին տափ): Ոչ, այն նույնպես փակ գոտի է մեզ համար: Հիշեցի «Սոբեսեդնիկ» շաբաթաթերթի ընթացիկ տարվա (№ 3) մի հրապարակում: Թղթակիցը գրում է, որ մինչև 1988 թվականի նոյեմբերը Թոփխանան չի նշվել Ադրբեջանի բնության, մշակույթի ու պատմության հուշարձանների ցուցակում: Եվ այն, ինչի մասին գրում էին հանրապետության թերթերում, աղմկում Բաքվի միտինգներում, ճշմարտության չնչին նշույլ չկար...

Այդ ամենի հետևանքն այս եղավ. հազարավոր մարդիկ տեղահանվեցին իրենց տնից-տեղից, օբանից, թողնելով իրենց պապերի օջախն ու... գերեզմանները:

ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԸ... Սուրբ հիշատակներ, շիրիմներ, որոնք կենսագրություն են ու պատմություն:

— Ո՞նց կլինի, հորս, հարազատներիս գերեզմանները մնացին անտեր, մայրս վերջին տարիներին շարունակ ավաղում է՝ երբ մեռնեմ, կթաղես հորդ կողքին,— պատասխանելու համար անըմբռնելի, դժվարին հարցով դիմում է ինձ արդեն նախկին չարդախլուցի վարպետ Սմբատը:

Չգիտեմ, վարպետ, չգիտեմ, ամեն մարդ պիտի ինքը որոշի, որովհետև ուրիշ մեկը գլուխ չի հանի դրանից, եթե խառնվի էլ՝ փչացնելու է գործը:

Լեզու պետք է գտնել, հասկանալ միմյանց, փոխադարձաբար զիջումների գնալ, թե չէ հակամարտությամբ ոչ ոք ոչինչ չի ստանա՝ վնասից բացի, բարոյական, նյութական: Քաղաքակրթության դար է, բանականության դար, ոչ մեկս իրավունք չունի ուժի դիրքերից խոսել, այդ «փիլիսոփայությունը» լոկ հետ է տանում: Հետ գնալ կլինի՞, ասենք՝ նախնադար: Դրա համար հո չէր սակավապետ ու իմաստուն Դիոգենեսը տակառի մեջ ապրում, թեև կար ուսմունքը և կոչվում էր ցինիզմ:

... Այսօր Արցախի ապոկալիպսիսն է՝ հայտնությունը: Եվ Արցախն այսօր իր լույսով ու ստվերով, լուծվելիք բազում-բազում պրոբլեմներով, մարդկանց հաստատակամությամբ ու լավատեսությամբ պայծառ գալիքի հույս է ներշնչում: Թե ինչպես և ինչով, դա արդեն այլ խոսակցության թեմա է, այդ մասին՝ հաջորդ նյութերում:

Հակոբ ՄԱՐՏՈՒՆԻ
(Մեր հատուկ թղթակից)
Ստեփանակերտ—Երևան